ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ ԿԱԶԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՏ ԿԱՄԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒԿ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 21 նոյեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Հ. Ազիզյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի մայիսի 26-ին Կազանում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ

սուբսիդիաները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրման հետ կապված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2017 թվականի նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի զրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի զրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրման հետ կապված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու կարգի մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի մայիսի 26-ին՝ Կազանում:

Համաձայնագիրը բաղկացած է ներածությունից և 26 հոդվածներից:

2. Համաձայնագրով կարգավորվում են անդամ պետությունների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) միջև անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաներ տրամադրելու հետ կապված փոխգործակցության հարցերը, սահմանվում է անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրումը Հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու, ինչպես նաև անդամ պետությունների

կողմից հատուկ սուբսիդիաներ տրամադրելու հետ կապված՝ Հանձնաժողովի կողմից քննություն անցկացվելու կարգը (հոդվ. 1):

3. Համաձայնագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ հատուկ սուբսիդիաների համաձայնեցման ընթացակարգի և քննության անցկացման հետ կապված գործառույթներն իրականացվում են Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանման՝ պատասխանատու դեպարտամենտի կողմից:

4. Ըստ Համաձայնագրի 4-րդ հոդվածի՝ հատուկ սուբսիդիաների համաձայնեցումը կատարվում է կամավոր հիմունքներով՝ անդամ պետության կողմից Հանձնաժողովին դիմում ուղարկելու միջոցով:

Համաձայնագիրը հնարավորություն է ընձեռում կիրառել արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաների համաձայնեցման ընթացակարգ, որը ներառում է.

ա) Հանձնաժողովի կողմից հատուկ սուբսիդիաների համաձայնեցման մասին անդամ պետությունների դիմումների ուսումնասիրություն (հոդվ. 5),

բ) պատասխանատու դեպարտամենտի կողմից հատուկ սուբսիդիայի համաձայնեցման ընթացակարգի մերժում (հոդվ. 6), կամ հատուկ սուբսիդիայի վերլուծության կատարում (հոդվ. 7),

գ) պատասխանատու դեպարտամենտի կողմից խորհրդակցությունների անցկացում (հոդվ. 8),

դ) հատուկ սուբսիդիաների համաձայնեցման արդյունքներով Հանձնաժողովի կողմից հատուկ սուբսիդիայի թույլատրելիության կամ անթույլատրելիության մասին որոշման ընդունում (հոդվ. 9),

ե) Համաձայնագրի 10 և 11-րդ հոդվածներով նախատեսված չափանիշներին հատուկ սուբսիդիայի համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ համաձայնեցման արդյունքներով եզրակացության նախապատրաստում:

5. Արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները փոխհատուցման միջոցներ չեն կիրառում այն

սուբսիդիաների նկատմամբ, որոնց տրամադրման ժամկետները, ծավալներն ու պայմանները համաձայնեցվել են Հանձնաժողովի կողմից (հոդվ. 4, կետ 3):

6. Համաձայնագրով սուբսիդավորվող ապրանքի ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասը որոշվում է փաստացի սուբսիդավորվող ապրանքի ծավալի և դիմումատու պետության շուկայում նույնանման ապրանքի գնի ու ազգային տնտեսության ճյուղի վրա այդ ներմուծման ազդեցության վերլուծության արդյունքների հիման վրա (հոդվ. 20):

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, այդ թվում՝

- փոխհատուցման միջոցներ չկիրառել այն սուբսիդիաների նկատմամբ, որոնց տրամադրման ժամկետները, ծավալներն ու պայմանները համաձայնեցվել են Հանձնաժողովի կողմից (հոդվ. 4, կետ 3),

- ապահովել, որ համաձայնեցման մասին դիմում ուղարկած՝ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը պատասխանատու դեպարտամենտի հարցումն ստանալու օրվանից 30 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում նրան ներկայացնի բացակայող փաստաթղթերը և/կամ տեղեկությունները (հոդվ. 5, կետ 6),

- ապահովել, որպեսզի սուբսիդիաների տրամադրման առնչությամբ Պայմանագրի դրույթներին համապատասխանության մասով ՀՀ օրենսդրության մոնիտորինգն ու համեմատական-իրավական վերլուծության անցկացումը կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը, ամեն տարի՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ից ոչ ուշ, Հանձնաժողով ներկայացնի Հանձնաժողովի հետ համաձայնեցված՝ տրամադրված հատուկ սուբսիդիաների մասին ծանուցում, եռամսյա պարբերականությամբ՝ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 30-ից ոչ ուշ, Հանձնաժողով և պայմանավորվող Կողմերին ուղարկեն հաշվետու եռամսյակում ընդունված այն նորմատիվ իրավական ակտերը, որոնցով նախատեսվում է հատուկ սուբսիդիաների տրամադրումը, ինչպես նաև միջգերատեսչական համաձայնեցում իրականացնելուց հետո պարտադիր տեղեկացման կարգով Հանձնաժողով և պայմանավորվող Կողմերին ուղարկի այն նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, որոնցով նախատեսվում է հատուկ

սուբսիդիաների տրամադրումը Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության՝ Եվրասիական միջկառավարական խորհրդի կողմից հաստատվող հիմնական ուղղություններին համապատասխան զգայուն ապրանքների շարքին դասվող ապրանքներ արտադրողներին (հոդվ. 12, կետ 2, մաս 1),

- ապահովել, որ բաց աղբյուրներում հրապարակված նորմատիվ իրավական ակտերի մասով Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը Հանձնաժողով ուղարկի այդ ակտերի վավերապայմաններն ու հրապարակման աղբյուրները պարունակող տեղեկություն, ինչպես նաև հատուկ սուբսիդիաների տրամադրում նախատեսող, բաց աղբյուրներում չհրապարակված նորմատիվ իրավական ակտերը (հոդվ. 12, կետ 2, մաս 2),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը պատասխանատու դեպարտամենտի ծանուցումն ստանալու օրվանից 15 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում նրան ներկայացնի բացակայող նյութերն ու տեղեկությունները (հոդվ. 14, կետ 8),

- ապահովել, որ Հանձնաժողովի հարցման հիման վրա հարցերի ցանկը Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի կողմից ուղարկվի սուբսիդավորվող ապրանքը կամ նույնանման ապրանքն արտադրողներին (հոդվ. 18, կետ 1),

- որպես դիմումատու պետություն կամ որպես սուբսիդավորող անդամ պետություն հանդես գալու պարագայում՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի կողմից պատասխանները ներկայացվեն Հանձնաժողովի հարցերի ցանկն ստանալու օրվանից 45 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում, իսկ սուբսիդավորվող ապրանքը կամ նույնանման ապրանքն արտադրողների պատասխանները Հանձնաժողով ներկայացվեն հարցերի ցանկն ստանալու օրվանից 60 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում: Հարցերի ցանկի առանձին կետերի վերաբերյալ տեղեկություն ներկայացվելու անհնարինության դեպքում ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը Հանձնաժողով ուղարկի համապատասխան հիմնավորում (հոդվ. 18, կետ 2),

- ապահովել, որ տեղեկությունը Հանձնաժողով ներկայացվի ռուսերենով, իսկ հայերեն կազմված փաստաթղթերը զուգակցվեն ռուսերեն թարգմանությամբ (հոդվ. 18, կետ 4),

- որպես շահագրգիռ կողմ հանդես գալու պարագայում՝ ապահովել, որպեսզի քննության հետ կապված մեկնաբանությունները և տեղեկությունը Հանձնաժողովին ներկայացվեն Հանձնաժողովի կողմից քննությանը մասնակցելու մտադրության վերաբերյալ դիմումը գրանցվելու օրվանից 30 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում: Գաղտնի տեղեկությունը Հանձնաժողով ներկայացնելու պարագայում՝ ապահովել, որպեսզի ներկայացվի նաև այդպիսի տեղեկության ոչ գաղտնի տարբերակը, որը կպարունակի գաղտնի տեղեկության էությունը հասկանալու համար անհրաժեշտ մանրամասն տեղեկություններ (հոդվ. 19, կետ 1, մասեր 2, 3 և 4),

- համաձայնեցված հատուկ սուբսիդիաների առնչությամբ Հանձնաժողովի կոլեգիայի կողմից Համաձայնագրի 21-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված որոշումն ընդունվելու դեպքում որպես սուբսիդավորող անդամ պետություն ապահովել, որպեսզի այդ որոշումն ընդունելու օրվանից ՀՀ լիազորված մարմինն դադարեցնի նշված սուբսիդիաների տրամադրումը (հոդվ. 21, կետ 4, մաս 2),

- Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում Հանձնաժողովին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի մասին և ապահովել ՀՀ լիազորված մարմնի մասին Հանձնաժողովին ուղարկվող տեղեկույթի թարմացումը (հոդվ. 23):

8. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրում հղում է կատարվում 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին և «Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու միասնական կանոնների մասին» արձանագրությանը (վերոհիշյալ պայմանագրի 28-րդ հավելված), որոնք ՀՀ կողմից վավերացվել են 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի վավերացմամբ (ՀՀ կողմից վավերացվել է 2014 թվականի դեկտեմբերի 4-ին, Ազգային ժողովի ԱԺՈ-132-Ն թվակիր որոշմամբ (ՍԴՈ-1175)):

9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի մայիսի 26-ին Կազանում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրման հետ կապված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 նոյեմբերի 2017 թվականի
ՍԴՈ -1388